

# ՀԱՅԱԿ

ՍՈՑԻԵԼԻ ՍՈՑԱԿԵՆ ԳԵՂԵՓՈՐԸ.

I.

Ահա արդէն վեցեօթ տարի է, ինչ մեր ամեն կարգի թէ ներքին և թէ արտաքին թշնամիներն ու հասկառակորդները չեն դադարում — մի կողմ թողնենք Հընչակեանների գործունելութիւնը — մի շատ յայտնի կենդանինի երաժշտական ամեն ձայներով յարձակվել և Հընչակին քարոզած սկզբունքների, գաղափարների վրայ, մեր հասարակական թէօրիանների, դաւանանքի վրայ: Եւ երբ աւարտ է ստանում — ափսոն, որ մինչեւ իսկ այդ էլ հէնց առաջին տողերից — նրանց դասողութիւնների շարքը, շրջուն, սովորական, հասարակ դասողութիւններ, նրանք շտապում են դիմել իրանց երկու սիրելի ու մըշտական գէնքերին — սուրբ տղիտութեան և քողարկված տառայի ու իսկ խարդախութեան: Այդ գէնքերից առաջինը նրանց թոյլ է տալիս միշտ ասել մէկ ամբողջ կոյտ ամեն տեսակ երեւակայելի ու աներեւակայելի տղիտաբանութիւնների, այդուհանդերձ կարծելով միամըտարար, թէ իրանց ասածն իմաստութեան բուն աղբիւրից է: Իսկ երկրորդ գէնքը նրանց միջոց է տալիս խաբել այն տիսմարներին, որոնք ականջ են գնում նըրանց: Եւ այդ երկու գէնքով միաժամանակ ամեն յարմար ու անյարմար պարագայից օգտվում են մեր դէմ գրգռելու իրանցից աւելի տգէտներին, աղաւաղված, շինծու, տարօրինակ, հօնչաւոր կերպարանքի տակ ներկայացնելով մեր սկզբունքներն ու գաղափարները: Այդ սկզբունքների, այդ գաղափարների ըմբոնելն, արդէն մեր հասկառակորդների մտաւոր կարողութիւնից շատ բարձր է. այդ գաղափարները նրանք չեն կարող հասկանալ և այն սակաւն էլ որ գուցե կարում են միայն իրանց սեփական անշնորհը ու ձանձրացուցիչ մրոտածները, որ իրանց այբ ու բէնն ու դպրոցական դասեր առած են միայն տէրտէրական ուսուցիչներից, և կամ լոկ մի մասնագիտական նեղ խեցիում ճշշել են իրանց ուղեղը. մարդիկ, որ լոկ նախապաշտումներով լի ու խաւար և կամ շինծու ու անբովանդակ մի կեանքի մթնոլորտում են կարողացել կազմել կիսատպուատ կարծիքներ, որ ոչ «չէ՞ն-ի տեղը գիտեն և ոչ «այն-ի, — այդպիսի մարդիկ են այդ հակառակորդները, որոնք ւակայն իմաստունի ու հանձարի տեղ են ծախում իրանց: Տընուր պարտականութիւն է մատնանիշ անել այդ իրո-

ղութեան վրայ, մեր այդպիսի հասարակական գործիչներ ու մրոտողներ ունենալու վրայ և բոլորովին հետաքրքիր չէ այդպիսի հակառակորդների հետ գործ ունենալու: Կրանց ողորմելի են: Եւ այդ թղուկները, երեւի իրանց հսկայ ներկայացնելու մորով երեմն-երբեմն ամեն ձիգ թափում են... աչ, ոչ թէ քննելու, այլ գրչի խուսափող ծայրով միայն շօշափելու մեր սկզբունքները — սօցիալիստական գաղափարը, օրինակ, այսպէս: — «Հրէշաւոր, անհեթեթ, չը փորձված, ցնորական գաղափար է սօցիալիզմը. միայն այդպէս, այսինքն յառձակումով: Բայց այդքանն էլ չէ խանդարում, որ նրանք այդ անմիտ արշաւանքում վայր ընկնեն և կոտրեն ու արիւնոտեն իրանց քթերը: Այդ մարդիկը, որ իրանց ներկայացնում են գիտուն և յանդուդն յաւակիութիւն ունեն հասարակութեան առաջնորդներ կոչվելու, սօցիալիզմի մասին իրանց հասկացողութեամբ շատ ու շատ յետ են ոչ միայն եւրոպացի, այլ և այն բանւորից, որ լսել է սօցիալիզմի մասին եւ քիչ թէ շատ մտածել նրա վրայ:

Ի՞նչ ենք ասում մենք, ինչ է ասում գիտական սօցիալիզմը:

Ոօցիալիստական գաղափարն այս-ինչ կամ այն-ինչ մարդու գիւտ չէ, այս-ինչ ցանկութեան, այս-ինչ զդացման, այն-ինչ վերացական, բնազանցական փիլիսոփայութեան արդինք չէ: Ոօցիալիստական գաղափարը գիտական արտայայտութիւնն է քաղաքակրթված ժողովուների մէջ տիրող ներկայ իրականութեան, իրական կեանքի, մարդկային հասարակութեան ներկայ պատմական շրջանում գոյութիւն ունեցող տնտեսական կերպերի իմաստի ու առաջադիմական ընթացքի: Սօցիալիստական գաղափարը գիտական եղանակացութիւնն է այն հետազոտութիւնների և քննութիւնների, որոնց ենթարկվել են զարգացած ժողովուների տնտեսական, հասարակական, քաղաքական կեանքի բոլոր երեւոյթները, ապրելու, աշխատելու, արդինաբերելու ձեւերն ու պայմանները՝ իրանց ամբողջ պատմութեան մէջ: Դրական-գիտական մէթոդով արված այդ քննութիւններից ու հետազոտութիւններից առաջ են եկած որոշ եղանակացութիւններ: Այդ եղանակացութիւնները պարզում են այն բնական առաջադիմական զարգացումն ու ընթացքը, որ ներկայում կատարելու մէջ է քաղաքակրթված մարդկութեան հասարակական կեանքում: Այդ եղանակացութիւնները միեւնոյն ժամանակ առաջ որոշում են, թէ կեանքի ինչ տեսակ կերպերի ու

պայմանների պէտք է յանդէ ներկայ կեանքում տեղի ունեցող առաջադիմական բնական զսրդացումն ու ընթացքը: Արդէն ներկայում կեանքի շատ ձիւղերում և գլաւորապէս նրա հիմնական, այն է արդիւնաբերական, ձիւղում սկսել են առաջանալ հարկաւոր տարրեր՝ դէպի կեանքի նոր պայմանների իրագործման տանող: Այդ տարրերը բնական կերպով աւելի ու աւելի զարգանաւով հիմնովին կերպարանափոխում են կեանքի ներկայ պայմանները և ստեղծում նոր պայմաններ ու կերպեր, որոնք, այդպիսով ճակատագրական, անխուսափելի կերպով պէտք է իրականանան և դառնան իշխող մօտ պագայում: Այդ ծագող կենսական ամեն ձիւղերի նոր պայմաններն ու կերպերն էլ իրանց էութեան ու բովանդակութեան իմաստով սօցիալիստական, հաւաքական, համայնական են: Այսպէս սօցիալիստական կերպերը յայտնվում են բնական յաջորդ կեանքի ներկայ՝ կապիտալիստական, բուրժուազական կոչված կերպերի, յայտնվում են այդ վերջին՝ բուրժուազական՝ կեանքի արգանդից ծնված: Հետեւաբար, սօցիալիստական գաղափարն անգործ մնացած մի խելքի հնարած բան չէ, երեւակայութեան ցնորք չէ և ոչ էլ մարդկային կեանքի թշուառութիւնները տեսնելուց միայն առաջ եկած լոկ մի բովանդը: Սօցիալիստական գաղափարը տնտեսական հասարակական կեանքում ներկայում կատարվող յայտնի եզօլիւցիայի, որոշ շրջան սփոխութեան գիտական արտայայտութիւնն է, ներկայում տեղի ունեցող անտեսական հասարակական կեանքի զարգացման ու առաջսդիմութեան իմաստն է, էութիւնն է:

Այս յօդուածում մենք կաշխատենք ապացուցանել այդ:

Ո՞ր մէկը նրանցից, որոնք գիտեն զգալ ու մտածել դիմութեալ իրանց շրջապատող կեանքը՝ չեն տանջվել հետեւեալ հարցերով — ինչո՞ւ համար գոյութիւն ունեն աղք սուութիւնը, թշուառութիւնը մի կողմից և միւս կողմից հարստութիւնը, փարթամութիւնը, շահագործութիւնը: Ինչո՞ւ համար այդ մէկը, որ աշխատում, քրտինք է թափում օրն ի բուն, ամեն օր սպառելով իր ֆիզիքական ոյժերը, — ինչո՞ւ այդ մէկը հազիւ կարողանում է լոկ մի խիստ անձուկ ապրուստի միջոցները հայթայթել մինչդեռ այն միւսը, որ չէ աշխատում փիղիքապէս ոչ գործարանում, ոչ հողի վրայ և ոչ էլ առհասրակ ուղղելով ուսման ու գիտութեան մէջ — ինչո՞ւ այդ միւսը փարթամ ու լայն կերպով վայելում է առաջինի աշխատանքը, իր ձեռքն անցրած լինելով ամեն հարըստութիւն — գրամական ու իրական կապիտալներ՝ շահագործում է այն առաջինին, աշխատաւորին, դարձնում նրան իր գործիքը իրը: Մի՛թէ այդ երկուն էլ միեւնոյն կենդանական ցեղից չե՞ն, մարդիկ չե՞ն, որ ծնված են մի մօրից, ուրեմն միմեսնց հաւասար իրանց ծնունդով:

Բայց սկսում են շնչել ինչո՞ւ նրանցից մէկի վոհտ մարմինն ամփոփում են շքել օրօրօցում, թաւիշների,

մետաքսների մէջ մինչդեռ միւսինը փաթթում ամեն տեսակ փալամաներում: Ինչո՞ւ համար գոյութիւն ունի այդ անհաւասարութիւնը ոչ թէ բնութիւնից, բնական օրբէնքով այլ առաջին շնչոց յետոյ, սկսած օրօրօցից, մինչդեռ նրանք երկուն էլ միեւնոյն բնական ու հաւասար իրաւունքն ունեն ապրելու ու աճելու: Եւ յետոյ, երբ այդ երկուն էլ մեծանալով բարբեր շօջաններում, ընկնում են կենսական ծովում, նրանցից մէկը, աշխատաւորի օրգին, արգէն վաղուց, փոքրութեան հասակից ի վեր, վարում է աշխատաւորի չորքաշ կեանքը, ապրելով սեւ թշուառութեան ու զրկանքների մէջ, մնալով անուս, տգէտ, օտար ամեն մտաւոր ու հոգեկան վայելքներին, որոնք անմառչելի են մնացել նրան համար: Խսկ միւսը... օ, այս մէկը, մեծացած մի դեղին կեանքի միջնորդատում, որտեղ տիրում է նախապաշարում, շինծուութիւն, ինքնապաշտութիւն, կոյր ինքնաբաւականութիւն, այդ մէկին է վիճակված ճաշակել հանդստի և ամեն տեսակ հաճցըների քաղցրութիւնը, ոչինչ չարտաբեր և վայելել ամեն բան: Եւ սակայն բնականից այդ երկուն էլ ծնվեցան հաւասար: Ինչո՞ւ հասարակութիւնը նրանց ըստ դրեց յար և նման պայմաններում հէնց առաջին օրից, պայմաններ ոչ թէ թշուառ և ոչ փարթամ, այլ միակերպ բարեկեց: Ինչո՞ւ չը տվեց նրանց երկուսին էլ կրթութեան և զարգացման մէկ լնդհանուր պայման, մէկ լնդհանուր մեկնման կէտ... Երկուսն էլ չեն արդեօր քաղցրացի-անդամներ մարդկութեան, կոչված նրան ծառայելու, հետեւաբար արժանի հանրութեան խնամքին, որ հասարակութեան պարտականութիւնն է: Եւ եթէ այդպիսի հաւասար ու բարերար, գիտութեան պահանջների համաձայն պայմաններ լինեին նրանց վըայտաբած խնամքի, նրանց կրթութեան, նրանց զարգացման պայմանները, ով կարող է ընդունել որ նրանք երկուն էլ կը լինեին արժանի իրանց մարդկային կոշման, աղնիւթիւնը լինեին արժանի իրանց մարդկային կոշման, ունենալով իրանց գրացումներով ու մտքերով օժակած, ունենալով իրանց ձեռքին հաւասար զէնքեր ու համբնթաց աշխատութիւն՝ իրանց լնդհանուր, այն է մսրդկութեան, շահերի ու առաջադիմութեան համար:

Ի՞նչ է պատճառը, որ կեանքում այդպէս չէ, որ գոյութիւն ունի ծայրայել անհաւասարութիւնը, որ հասարակութիւնը բաժանված է լնդհանուր առմասը երկու գասակարգի վըայտական կան ամեն տեսակ անարդարութիւններ, ոճիրներ, վատութիւններ, պատերազմներ, և այլն: Որո՞նք են վերջապէս այդ անհաւասարութեան և հասարակական բոլոր մնացած երեւութեան սկզբնապատճառները և նրանց տեսողութեան պայմանները:

Եւ այդ հարցերի բառաջ մնում է շուարած այն մէկը, որ միջոց չէ ունեցել ուսուումնասիրելու մարդկային

հասարակութեան պատմական կեանքը և նրա զարգացման ընթացքը: Նահապետական հին խելքերն այդ դէպքում ամեն բան գցում են նախախնամութեան վրայ, և խեղճ ու անբաղդ Ադամի ու Եւայի մեղքերի վրայ, այդ նախախնամութեան, այդ մեղքերի մէջ տեսնելով առաջին ու վերջին պատասխանն իրանց հարցերին: Եւ այդ նահապետական խելքերը մտածում են, թէ իր սկզբից ի վեր մարդկութեան մէջ գոյութիւն են ունեցել հարուստ ու աղքատ. թէ այդպէս լինելով այժմ, այդպէս էլ կը լինի միշտ. թէ այդ է նախախնամութեան սահմանած օրէնքը: Եւ այդ մեռելային համոզումն օրինական ու յաւիտենական է համարում մարդկութեան ահագին մեծամասնութեան, այն է աշխատաւոր բաղմութեան, նիւթեական ստրկութիւնը, թշուառութիւնը, չարստանջ կեանքն ու աշխատանքը սակաւաթիւնը, ունեւոր դաստկարգի օգտին, որն իշխող լինելով նիւթականապէս, իշխող է հանդիսանում նաև հասարակական ու քաղաքական շրջաններում: Եւ ունեւոր դաստկարգը չարաշը օգտին է այդ նահապետական տրամաբանութիւնից, որ ամբողջովին ծառայում է իր շահերին և յանուն քրիստոնէական վարդապետութեան՝ ամեն տեսակ եղանակներով՝ երգում՝ իբրեւ բրիստոնէական սէրէնագ (ցայգերգ): Թշուառ բաղմութեան ականջին՝ իմս է երկրային փառքն ու վայելքը, թող բեզլինի երկնային արքայութիւնը. իմս է աշխատանքիդ արդգիւնքը. այդպէս է սահմանել նախախնամութիւնը: Ուրանչելի երգ ասուուածավախ մի հոգու, այնպէս չէ... Ինչ հեգութիւն. . . Բայց այդպէս չեն խօսում քննող ու զարգացած խելքերը, որոնք հրաժարվել են այդ սոսկալի համոզումից, եթէ երբ և է ունէին: Նրանք անարդար, անխաստ, յոտի են գտնում այն, որ տղիտութիւնը ինչոր նախախնամութեան է վերագրել կաշկանդելով՝ մարդկային մտրի աղատ ու անկախ բննութիւնն ու ընթացքը, ցամաքեցնելով մարդկային նախաձեռնութեան աղբիւրը, օրինական համարելով ամբողջ մարդկութեանը կերպութ աշխատաւոր ընդհանրութեան կեանքի դժոխք լինելը, օրինական համարելով աշխարհաստաված այն արքայութիւնը, որի մէջ վարում է իր կեանքն ունեւոր դաստկարգը, դասակարգ չաշխատող, չարտագրող վայելող ուրիշի քրտինքով ապրող Եւ անկախ ու քննող խելքերը գարձնում են իրանց նայուածքը դէպի գիտութիւնը, միայն դէպի գիտութիւնը, որը՝ մարդկային հասարակութեան ամբողջ պատմական կեանքի ուսումնասիրութեամբ՝ նրանց պատասխանում է բողոքովին այլ կերպ:

Ուեւ ինչպէս է նա պատասխանում, մնք կը խօսենք՝ “Հնչակի յաջորդ համարում:

## Ժ Դ Յ Շ Ա Յ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր

### ՆԵՐԵԿԱՆԵՐ ԹԻՒԲ-ՔԵՍԻՑԻՑ

Կ. Պոլիս, 7 մարտ 1894.

Չը շատանալով իր գրեթէ ամենօրեայ աղօթքներով սուլթանի հոգւոյն համար հայոց եկեղեցիներու մէջ, մեր սրբազն պատրիարքը երբեմն-երբեմն կաղօթէ անոր համար հրապարակօրէն եւս, հրատարակելով անամօթ թղթի կտորներ, որ Ծրջաբերական կանուանի Անցեալ փետրուար 9-ին ալ նոր Ծրջաբերական մը հրատարակեց՝ ուղղուած “բոլոր առաջնորդաց, առաջնորդական տեղապահաց, պատրիարքական փոխանորդաց, եւ վանահայր ի գուառոսոյ: Ծրջաբերականի նիւթը... Յայտնի է թէ ինչ է. գարձեալ և դարձեալ անիծեալ “իւրուովարաններուն, “ստահակներուն, յեղափոխականներու գէմ: Հին, բայց և միշտ նոր նիւթ մը: Աշբգեան այդ նիւթէն դիւահարած է. ամեն անդամ երբ իր խօսք կուղղէ ժողովրդեան, նա ուրիշ ասելիք չունի, ուրի շմիտք կուղղէ ժողովրդեան, նա ուրիշ ասելիք չունի, ուրի շմիտք մը չունի, եթէ ոչ “ստահակաց յանդգնութիւնը: Այս մը չունի, եթէ ոչ վերջին ըսել: Պատրիարքը սաստկապէս որբ կընանք նորութիւն ըսել: Պատրիարքը սաստկապէս գանդատի գաւառական առաջնորդաց գէմ: Կառակը գանդատի անոր աղեկ մը յանդիմանած է, ի բրեւ սոսորագրեալ ծառայի մը, “թէ գաւառաց մէջ առաջնորդք եւ հոգւեւորակներու ոմանց ստահակաց ան արժան յանդգնութեանց վրայ անտարբերութեամբ կը նային, իսականացն աղապանման գործոյն մէջ կառավարութեամբ ու լուսութեամբն արտաքուստ եկեալ վեսասակար գրգումանց աստիճան մը կարծես ուժ կուտան, ապա թէ ոչ կըսուի (այսինքն կառավարութիւնը կըսէ), մինչեւ հիմա շատոնց ստահակներ կը պակսէին և խաղաղութիւնը կը հաստատուերուն, և այլն:

Ընթերցող նկատեցիք արդեօք կէտ մը այդ առաջնորդերու պարբերութեան մէջ կառավարութիւնը Աշբգեանի բերնով կը գանդատի հայ առաջնորդներու գէմ, թէ եթէ նորա օգնէին “շատոնց ստահակները կը պակսէին, եւ այլն: Արգեօք ատկէ աւելի փայլուն խօստավանութիւն մը կրնայ ըլլալ կառավարութեան տկարութեանն և անկարողութեանը յեղափոխականաց գործերը կասիցունելու համար: Իր այդ անկարողութիւնը ըս ցուցնելու միտումով նա կը մեղագրէ... որը... հայ առաջնորդը, հայ հոգւեւորականը, թէ անտարբեր կը մը նան դէպի յեղափոխական գործողութիւնը, թէ չեն աշխատեցիք կառավարութեան, եթէ ոչ, “շատոնց ստահակներէն արգէն ատրիներէ ի վեր քեզ համար կաղօթէ ու կաշխատէ Աշբգեան-շէյխը և ինչ օգուտ ունեցար գու այդ աղակցութենէ, ով կառավարութիւն: Այժմ ալ առաջնորդներուն կը կոչէ օգնէին քեզ կոկն անպտուղ պիտի ըլլայ նոցա աջակցութիւն. անոնք ալ կանցնին Աշբգեանի շարքը ինչպէս արդէն անոնցմէ շոտերն անցած են... .

Ծրջաբերականի մէջ Աշբգեան-ատելին կը խրատէ հայ հոգւեւորականներուն, որ քարոզեն ժողովրդեան անկեղծաւոր հաւատարմութեան իրական հաւստիք իւր

սիրեցեալ ԱԵՀապիտին հայրական գուման և ողորմած  
ոիրաբը շահել ո: Ի՞նչ ոճ, ի՞նչ միտք, ի՞նչ հոգի — աղ-  
տոտ, ցածր, ստրկական: Եւ ապա Աշբետնեամբ ստրուկը կը  
սահմանի առաջնորդաց և հոգեւորականաց պաշտօնն ու  
պարտականութիւնը հայ յեղափոխականներու վերաբե-  
րութեամբ: Պաշտօն, պարտականութիւն — լրտեսութիւն,  
մատնութիւն անել կառավարութեան կողմէն « դատախազ  
կանգնել անխրատ ստահակիներուն, իբրև դատախաղք  
ազգային հաւատարմութեան պատոյն»... Եւ այդ Ա-  
շբեան-զղուելին աղքային պատոյ մասին կը խօսի,  
պաշտպան կը ձեւանայ... ձեղուին, ձեղուին... .

Անգլիայ նոր գեսապան Սըր Ֆիլիպ Քըրթի տակաւելն  
իր յանձնարարագիրերը չը ներկայացուցած՝ Բ. Գրան  
մատուցեր էր երկու ծանուցադիր, մին՝ հայկական և  
միւսը եղիսաբետական խնդրի մասին. և աշա այս ինդիք-  
ներն են որ ամենէն աւելի սուլթանի ջըերու կը դրա-  
զին: Աւատի նա գեսապանի այս վարժանքէն այնչափ զայ-  
րացնը էր, որ անոր պաշտօնական առաջին ընդունելու-  
թեան օրը յետաձգած էր: Այդ ընթացքը տեղի ալ-  
ւար խոշոր գէպքի մը: Բ. Գուռը գեսապանին կը ծանու-  
ցանէ թէ սուլթանը քանի մը շաբաթէ ի վեր տկար  
ըլլալով՝ չը պիտի կրնայ ընդունիլ Գեսապանը կուղէ ստու-  
գել այդ և իրեն գժուար ըլլար իմանալ ճշմարտու-  
թիւնը: Ասոր վայ գեսապանը զայրանալով՝ երիտողով ծա-  
նուցադիր մը կը զգէ Բ. Գուռը, յայտարարելով որ եթէ  
մինչեւ 24 ժամ՝ սուլթանը զինքը ընդունի՝ անմիջա-  
պէս պիտի հեռանայ կ. Պոլսէն: Այս ծանուցադիրը մեծ  
յուղում յառաջ կը բերէ և սուլթանը կը ստիպուի “իր  
թքածը լիզել և հետեւեալ օրն իսկ ընդունիլ անդ-  
լիական գեսապանի այցելու թիւնը:

Բաղեցէն կը համին լուրեր, թէ իմր Մշո նսիկին  
առաջնորդ յայտնի և երսէս վ. Խարախանեան եան  
բանտին մէջ շատ խիստ հիւանդ է:

Անցեալ շաբթու սիկոմիդից երկաթուղիով չայտար  
բաշա բերուեցան 16 հոգի հայ բանտարկեալ որոնց մէջ  
քանի մը եկեղեցսկաններ ալ կը դանուին: Ատոնք բեր-  
ուած են Սեբաստիոյ և Եօդի սմբի կողմերէն: Այս վեր-  
ջին քաղսբին հետ ամեն տեղի եր նամսկագրական յա-  
րաբերութիւնք կտրուած են: Ինչ կը կստարուի հոն,  
յայտնի չե: Ստոյդ է սակայն որ քանի մը հարիսր ձեր-  
բակալութիւնք են տեղի ունեցած վերջին գեպբերէն  
յետը. . .

ԿԱՑԻՆ

Ամսիայ, 23 փետրվար 1894.

Առաջանը եթէ կը կամի ոս իօ զինւո՞ներ անվախ շըխն Ամսսիոյ փաղցներու մէջ գիշեային հակողութեան համար, պէտք է նախ կայսերական ֆէրմանով կատուների անհետացումը հստաբակելց որպէսզի անոնց թաթերի ձայնը չը խռովէ այդ գիշեայսպէսեր:

Յուն. 25-ի գիշերը Տէքտէք թան Յառաւ-  
թիւնի տան մօտ հսկող զինւորներ կահաբեկեն յա-  
նակնկալս յիշեալ տան մէջն լսելով դղզիւն մը (հայ  
հռոսակի ոտից դղզիւնը գուշակելով ի հատկէ). սակայն  
քիչ մը աղստ շունչ կառնեն, եթի կը լսեն զիօննը խը-  
ռովեցնող կառուին միառունենք: Եւ սիրտ առած 8-  
10 հոգով միայն — արտասովոր եթեւոյթ — քաջութիւն  
կունենան պաշարելու տունը, և ինչ նարօյէնական հր-

սամանատարութեամբ հօամանների ոռոտում մը, որ կարձակուի զինուո՞ների պետի բերնէն — «Կոտորե՞լ, սպաննել հայ հրոսակները»... Միմէ ասոնք այն զինուո՞ներէ չե՞ն, որք քանի մը շաբաթ առաջ հարիւրներով հաղեւ կը հոմարձակեին յետախռովել հայ հրոսակներու հետքը անեսու մէջ այն ալ իրենց բռնի առաջնորդ կարգելով միշտ մի կամ երկու հայ, որպէսզի ըստ կառավարութեան՝ դառնների և ծակերի մէջ ապաստանող փախտականների առաջին գնդակները հայերի հանդիպելով՝ զինուո՞ները ժամանակ ունենան փախուստ տալու: Ո՛չ, ասոնք այն զինուո՞ներէն չեն. Խիդախ քայլերով կը խուժեն տնէն ներս և սպանալեօք կը ձերբակ սլեն ասնուտէրը: Խեղճ մարդըն այլայլած ի զուր կը ջանայ մեկնել լսուած ձայնը, որմէ արդէն տեղեակ՝ անդիտանալ կը ձեւանան դարբարուները և կը ներկայացնեն ձերբակալեալը ոստիկանապետի առջեւ հրոսակ մը իր տնէն փախցունելու զըսպարտութեամբ:

Հետապնդիր և ծիծաղաշարժ ընթացք մ' է ու բռնաց այս ամսէն ի վեր տեղայս կառավարիչ փաշանն, որ իր գործածած ամեն միջացներէ ճարահամա՝ կը դիմէր հըմցյիշների և վշտւկների, երթեւ մրակ միջոց թափանցելու համար յեղափոխականների գաղտնեաց. Քաղաքակիրթաշխահի առջեւ ինչ ծաղրի առարկայ, երբ կառավարութիւն մը ձեօքակ սլելու հսմար իշ ապստամբները՝ կը նորհօդակցի կախարդների հետ, եօք կառավարիչ մը կը անօրինէ իր գործերը վշկոց պատգամների համաձայն: Մեր փաշան, որ վեց ամիս առաջ խոշոր խոշոր կը ջարդէր պիտի գտնեմ յեղափոխական պարագալուները. ազստամբների դիակները մի քանի օրէն պիտի փոեմ գետինը և այլ պոռատախօսութիւններով այսօր կը հարկադիր դերբնական ոգինութիւնը հայցել կը ջանոյ վհակների միջացաւ իմանալ հայ հըռոս սկների օրակն ու քանակը, անոնց ապաստոնած վայրը և զայն ձեօքակալելու միջոցը: Վհուկներ կը պատասխաննեն, թէ հայ հօսոսակային խումբ մը, որ կը բաղկանայ վեց անձեռէ, ապաստանած է Սալստիոյ թաղերի մէջ սսկայն այս փոքրութիւն խումբ օժտուած է այեւպիսի կարողաւթիւններով որ զայն ձեօքակ սլելու համար պէտք է պաշարել թաղերը քանի մը հարիւր զիւնոցներով և այլն: Մեր միւթէսարքի թէեւ երկիւզի մէջ կիյնայ, բայց օրէ օր իս վստահութիւնը կաւելանայ վրհուկների վրայ. ամեն կնճռուս խնդիրների և խուզարկութեանց առթիւ միւթէսարքի անբաժան ընկերներն են երեք արաք վհուկներ: Անոնց հետ մէկտեղ ու բաղմաթիւ սստիկաններով երեւմն կը պտտի գիշերները հըռոսակիներու հանդիպելու յուսով և սակայն փողցին մէջ գիշեր մը երկու հարած թիւք հեռուէն պառկած տեսնելով վախէն չը մատենար անոնց խորամանկ յեղափոխականներու տեղը ընդունելով: Այդ երկու ողոմներին միւթէսարքի այդ սիսլին ու վախին համար ազեկ ծեծ

Բայց միւթեսարլֆին այդ բոլոր աշակրջութիւնը ան-  
կարող եղաւ առաջքն առնել նշանաւոր գեպքի մը: Օր  
մը, ամսայս 20-ին, ամբողջ Ամստիայ թեթեւ շունչ մը  
առնելով կիմսնայ, որ անցայտ մնացած մէկը սպաննած  
է յայտնի և խիստ վնասակար լրտես մը՝ 2 էօ մլէ ք-  
ձեան թա թէ ոսը: Յեղափոխսկանաց այդ ողբերգո-  
կան ծաղօի վը ոյ կուղլուէօ միւթեսարլֆի քաջու-  
թեան և աշակրջութեան, ոս կատ ողաւթեամբ 60—70  
ձերբակալութիւններ կրնէ հայոցմէ ժիր ու երիտասարդ,

անմեղ ու կասկածուած՝ ամենը, առանց խտրութեան: Այդ չաղատեր սակայն մեւթէսարքիլ, որոյ անընդունակ ու վախիկոտ ըլլան անհետքելի է: Եւ նո պաշտօնանկ կըւլայ, իսկ անոր տեղը անցած է Մսզդուանի վայրենի, կոչ-, կոպիտ Պէքիթ փաշան (չէքեղ), որ այժմ մեծ մեծ խոստումնեւ ըրած է ուր որ անկ է ժողովրդին յառաջումն գագրեցունելու համար:

Թօնալ գործէ նա. մեր փրկութիւնն միայն մեզմէ  
է կախեալ մեր զէնքէն է դարձեալ . . .

ԶԱՆԳԱԿ

Այ թիվը ՏԵՍԻԹԻՒՆԸ ԹԻՀՐՑԻՄԻ ՄԱԼԻՆ.

Լօնդօնում հրատարակվոյ և Westminster Gazette, թերթի 1893 թ. № 106-ի մէջ առաջ են բերված Թիւրքիայի գործերի մասին մի թիւրքի յայտնած կարծիքները, որ խիստ հետաքրքիր ու բնարուշ լինելով, զետեղում ենք այստեղ ամբողջութեամբ:

“Ալ հարցունէք գաղափարս. Օսմանեան տէրութեան ներկայ կացութեան մասին, — ասում է այդ թիւրբը: — Ուրախ եմ որ այս պատեհութեամբ կրնամ միտք աղատօրէն պարզել համակիր ունկնդիրի մը: Գիտէք որ հոչակաւոր հօրս պէս ուղղամիտ աղստական մը եմ. հետեւապէս չը պիտի զարմանաք երբ յոռետես գաղափարներ յայտնեմ իրաց արդի վիճակի մասին: Արդորեւ ներկայ վիճակէն աւելի դէշ հազիր կրնայ ըլլալ. այս գաղափարը կը կրեն նաեւ հայրենակիցներէս ոմանք որոնք թէեւ առ այժմ չեն կազմեր մի մեծ թիւ, բայց ինձ պէս կը սիրեն իրենց հայրենիքը, ամօթ կըզգան նորա ներկայ կացութենէն եւ անյօյս են նորա ապագայի մասին: Ազատամիտներս սակաւաթիւ. ենք եւ Բնէջ կրնանք ընել բացէն մեր գաղափարները յայտնիլ կը նշանակէ մեր վրայ հրաւիրել ատելութիւն եւ պատիմ կամ աքսօր, առանց ու եւ է շափով մօտենալու մեր նալստակին. գաղտնի գործել գրէթէ անկարելի է, զի Պօլսոյ մէջ գաղտնապահութիւն գոյութիւն չունի:

“Տեղեակ էք անշուշտ այն ընդարձակ լրտեսային դըրութեամն, որ կաջի օր քան զօր. հաշիւ եղած է որ պոլատի կողմէն 50,000 մարդ կը դործածուի իր լրտես ուղղակի կամ անուղղակի: Ասոնք մարդեր են ամեն աստիճանեւ, եւ կը ծպտին ամեն ձեւի տակ. տէրվիշի խը գայ է ն մինչեւ զօրապետի իւնի Փօր ման: Ընկերային առնչութիւն կաշկանդուած է հազարումեկ սրտենբեղիչ կապանքով զրո օրինակ, երկու փաշա մութը կոխելէ վերջ՝ չեն կրնար միասին մնալ տան մը մէջ, եւ ոչ երկ ւըեն աւելի՝ ցերեկ ատեն, առանց մասնաւոր թոյլտուութեան: Սցյան կարգի կանոններ դարձեալ կը սահմանաւորեն առնչութիւնն զինւորական և այլ վարժարաններու ուսանողաց: Տօն օրերը մրտիր ժողովարդի մէջ եւ տես թէ ուր որ բազմութեան նըմանող գումարումներ կան բնչպէս, հրացան յուսին, 4-5 զինւորէ բաղկացեալ մի խմբակ կը հսկէ զանօնք՝ կասկածու, աշալուրց: Գնա սէլամիթգ, ոչ թէ ինչպէս առհասարակ օտարներ կերթան մասնաւոր տեղէ մը հնագեսը դիտելու արտօնող տամօներ առներով իրենց հիւսկատոսարաններէն, այլ մատիր ամբոխին մէջ եւ տես թէ սուլթանին հաւատարիմ հպատակներ՝ բնչպէս իր սուրբ անձէն հնուի կը պահուին զօրքերու եւ անթիւ ոստիկաններու երրեսէ շարքով մր: Այս ամենը արտաքին նշաններն են այն քա-

զաքականութեան որ գերիշխան կը տիրէ պալատին թէ ներին եւ թէ արտաքին իրաց մէջ այս բաղսբականութիւն կինայ բացարուել մէկ բառով.—ԱՅս:

Առ ու եւ է մին ներքին խնդրոց, հայկականը, զոր օ-  
րինսկի, եւ թերեւս ամենէն ծանրը: Մեր բաղաքագէտներ  
հակամէտ են պարծելու թէ Հայաստան ոչ եւս է: Մեր  
դպրոցաց մէջ գործածուած աշխ որհ ացցյշերուն վրայ այդ  
անունը չերեւիր: Եւ սակայն ասով խնդիրը խնդիրը ըլլալէ  
չը գագրիր, խնդիրը կայ ուր որ հայ խումբ մը եւ կամ  
խումբեր կսն, այսինքն, բոլոր տէրութեան սահմաններուն  
մէջ եւ սահմաններէն գուրատ: Կրակը մարել ձեւացունելով  
կայծերը ցրուցիւր, արծարծեցինք: Առանց որդեգրելու  
մի որոշ բաղաքականութիւն հայոց մասին եւ առ այնյա-  
րելու՝ Բ. Գուռը երբեմն վախցուցած ու երբեմն խաբուսիկ  
յոյսերով շցած է: — բայց ոչ երբեմն պարտգաներու մէջ  
երկուքը միանգամայն ըրած է: Մէկէ աւելի հայ եկեղեցա-  
կան խռովուար ոճին համար բայցէն յանդիմանուած է,  
մինչ միեւնոյն ատեն բարձրագոյն իշխ սնութենէն գաղտ-  
նի առաջարկներ ընդունած է իր լուռութիւնը ծախելու: այս  
նաևակներէն ումանք եւրոպական մամուլին հասան, եւ գիւ-  
րին է երեւակայել թէ ինչ աղդեցութիւն ներգործեցին  
մեր կառավարութեան վարիի մասին:

“Օսար տէրութեանց հետ մեր գործառնութեանց մէջ եւս մեր վարմանքի նոյն ձգտումը կը տեսուի. տէրութեան մէջ լիւ լիւ կը լող ամեն մորդ համոզուած է լիովին թէ թրբական իշխանութեան օրերը Եւրոպայի մէջ համրուած են: Զար օրը հետացունել՝ իշխանութեան գըլուսի եղանիքու միակ ջանքն է. վարութեանց եւ օսար տէրութեանց նախանձէն օդտուելու համար՝ պատառ մը կը նետեն նախու մէկին առա միւսին: Այսօր երկխմբուղլոյ արտօնութիւն մը կամ զիջում մը կրլլայ գերմանից, վաղը Գալիոյ եւն, եւն: Այս շնորհայ բաշխումին մէջ վերջեւս Անգլիան գուրս է ձգուած ի նշան գժգոհութեան ի մասին Եգիպտոսի տեւական գրաւման. իբր իրողութիւն՝ Բ. Դուռ և Ներշացած ըլլոյլու հաճցքը կը վայելէ. եթէ Նգիպտոս վաղը մեզ ետ տրուեր, շատ հաւանական է վաղուց զշալու պատճ ռոներ պիտի ունենայինք. Եգիպտոցիք եւ կամ անոնցմէ մի մաս կրնան դաւանիլ թէ թրբական գերիշխանութիւն կը նախալնտրէն, մինչ կը վայելին նիւթեական առաւելութիւններ զորս անդիւճական գրաւումը կապահովէ իւնց, եթէ այս իլձը շնորհուեր իրենց՝ շատ հաւանական է պիտի գարձունենին իրենց գանգատը. գժգոհ Նգիպտոս մի նոր ծանրակշիռ խնդիր պիտի ըլլայ Թուրքիոյ ուսին. արդէն հաղին. կրնանք համեմիլ Հիմազի մէջ կարգ կանոն պահելու:

“Ամեն կողմ վախ, ընական հետեւանքը տկարա-  
թեան, որու լիուլի գիտակից ենք: Ամեն անոնք որ կամա-  
չեն դոցեր իրենց աշքեր՝ պիտի տեսնեն որ վերջին 20  
տարիներու մէջ շարունակ յետագիմելու, վասթարձանալու,  
վրայ ենք: Պատերազմը մեղ լաւ գաս մը տալու էր, բայց  
մենք մերժեցինք օգտուիլ յօրէ անտի միշտ ընկղմելու վրայ  
ենք, խոր, աւելի խոր, տղին մէջ ջանալով խարել մեր ան-  
ձերը եւ ուրիշները թէ՛ հերոս պկան քաղաքականութեան  
արտաքին ձեւերը փախ առնելով՝ {յաւացգիմութեան} պո-  
ղոտային վրայ կը դանուինք. կեղծ է այս բաղրը: Առէք մեր  
դատարանները, միթէ ատոնք իրենց կէս-Փրանսական ձե-  
ւին տակ արդարութիւն կը գործեն կէտ մը աւելի ան-  
կողմն սկալ՝ քան զատ ին երաւ հին դատարաններ: Առէք  
մեր գետական խորհուրդը. սա լիցուն է խակ պատանինե-  
րավ պատրաստ քուէարկելու ըստ հրահանգի այն զօրու-

թեան՝ որ զերենք հռն զետեղեց: Կոյն տահն մեր ազգային հին հաստատութիւններ փճացած են զոր օրինակ Պապիւթիւն գլուխ դոյութիւն ունենալէ դազրած և արդեամբ, ըստ որում նորա օրէնքներ կամ լաւ չեն զործադրուիր կամ չեն յարգուիր:

Ա Մեր նո խին տաժանակրութիւնը եւ պարզութիւնը անցան գացին. նայէ մեր բարձր դասու պատանին գաղիւրէն սովորած է, բաւական զնահատելով բարիզեան մամլոյ պոռնկային արտադրութիւնները. կրնաք երեւակայի ինչ աստիճանի օգտակար է առ իր անձն եւ առ ազգն: Մեր երիտասարդներէն ունաք բարիզ կերթան՝ բազդի բերմամբ ընարուած եւ յանկարծ մեր վարժարաններէն պուլքառները փոխադրուած եւ ապա ետ կանչուած. սուքա իրենց հետ կը բերեն արեւմտեան քաղաքականութեան ամենավատթար մոլութիւնները:

Ա արցուր օտար վաճառականի մը թէ թուրքի մը երբեմն վատահելի խոսրվ այսօր ինչ արժէք ունի առեւարրական գործառնութեանց մէջ. հարցուր բժշկաց մեր սումանցի բնակաց (թուրք դասուն) յաւատեւ նուազման պատճառները:

Ա Պէտք եղածը չէ այնչափ (!) նիթական բարեկարգութիւնները, — թէ և ասոնց համար ալ շատ տեղիք կայ. — որչափ մէծ բարյական մի ոգեւորութիւն. այս ինչպէս կրնայ յառաջ բերուիլ կամ թէ արդեամբ անկարիլ է. — չեմ կրնար ըսել ինչ որ կրնամ ըսել այս է թէ առանց ատոր՝ Օսմ. տէրութիւնն փոշի պիտի վերածուի անպատճառ: Ոստի անդիւն կը նայի եւ կը ծիծաղի, զի գիտէ թէ կորստեան ճամբռ վրայ մեղ օդնելու համար՝ պէտք չունի մինչեւ իսկ մատը շարժելուն:

Հը: Երկրում աշակին մեծամասնութիւն կազմող բանւոր գասակարգի մի մասն իր քուներով ու համակրութեամբ մէծ ոյժ էր տվիլ բուլանքիսներին, անգիտանալով որ զրանց մլած կուրը և զրանց տիրապետութիւնը նոյնան միասն միասն անդորութիւնից յօդուտ այդ գասակարգի, այլ նաեւ ճնշումներից, զիւրութեամբ խաբվում էր բուլանքիսների շարժման երեւոյթից, չը համկանալով զրա բուն իմասուր և չը կարողանալով թափանցել գաղանի միտքն այն հայրենասիրական և իր բանւորական շահերը պաշտպանող դատարկամիչներին ոյժ տալու եւ իրանց ձեռքին նրանց յարմար գործի իր գարձնելու համար բուրժուազիսի կառարարական հանրապետականներն էլ իրանց կողմից նոյնպէս զիմում էին ամեն տեսակ միջոցների նոր երեւան ելուծ բուլանքիսներին կուսակցութեան գէմ, որ նոյնպէս բուրժուազականացնում էին բանւոր գասակարգի մի մասը և շեղում նսան գէպի իր շահերը տանող ճշմարիտ ուղից, ինչ բուլանքիսներական տագնապի սկըզբից մինչեւ վերջ չէր գագորում ասել և զգուշացնել սոցիալիստ. գէմօկրատ, այն է ֆրանսիայում իրանց պարագուի ժիւլ գէղի անունով՝ գէղիստ կոչված կուսակցութիւնը: Այդ կուսում վերջապէս յաղթուղ հանգիստ համար հանրապետական բուրժուազական կառավարութիւնը, գուրս գալով սակայն այդ մենամարտութիւնից խիստ անուանաբիշած, վարկն ընկած, անպատիւ ու թուլացած: Նոյնն էր եղել նուեւ միապետական կուսակցութիւնների հետ, որոնք նոյնպէս բուրժուազական են: Եւ ահա այդ երկուսն էլ պահանջ զգացին մի կերպ բարձրացնելու: Իրանց վարկը ժողովրդի աշքին և աղատել բուրժուազական հաստրամաններն էին, որ այս վերջիններին երկայացուցիչներից շատերը որ կազմվեցաւ բուլանքիսներական սագանակից յետոյ, ուներ մօտ 40 բուլանքիսներական պատգամաւոր և աւելիքան 170-180 պահպանողական, այն է միապետական կուսակցութիւնների պատգամաւորներ, որոնք ընդհանուր առմամբ պաշտպան էին կանգնել բուլանքիսներական շարժման, օգտվելով զրանցից իրանց բազական զիտաւորութիւնների ու ձգտումների համար: Բուլանքիսներական շարժման բուն պատճառը ժողովրդի ընդհանուր դժունութիւնն էր իր տնտեսական վիճակ, մի դժունութիւնն որով օգտվեցան բուլանքիսն եւ իր կողմանիցները, ձգտելով իրանց ձեռքը դժել քաղաքական դէկը: Կուրը մլած էր այդպիսով բուրժուազական երկու կուսակցութիւնների մէջ որոնցից իւրաքանչիւրն ուղում էր իր ձեռքն ունենալով բարձրական զե-

նեւոր ներկայացուցիչներից, որոնք մատ ունեին այդ գործում և բոլորովին թշուառացման միջին դասակարգից բազմաթիւ անձեր ու ընտանիքներ, որ իրանց դըրամը տվել էին Պան ու այլի ընկերութեան արժեթուղթերին: Այդպիսի գործերն արդէն յստե ու բաժինները բուրժուազական կարգերի, ֆինանսական, բօրսային ու բանկային խաղերի ու գործերի սիստեմի, գործադրվաղ եղանակների: Այդպիսի պանամուկան գործեր եւրոպուկան բուրժուազական այլ և այլ տէրութիւնների մէջ եղել են առաջ, տեղի ունեցան Պանամայի գործից անմիջապէս յետոյ Խտախայում, Գերմանիայում, և բուրժուազական հասարակական արգանդից ծնված անխուսափելի ու պարբերական երեւոյթներ են կազմում: Պանամայի սկանդալից գեռ մի քանի տարի առաջ գարձեալ նոյն վերցյիշած մորթիստացիալիստը՝ Ժիւլ Գէդ՝ իր թերթում մարդարեանում էր ոյդ ընկերութեան այդպիսի վախճանը: Բանը նըրանումն է, որ գիտակ ան սօցիուլիլից, Հիմնավին ըննած ու որոշած լինելով բուրժուազուկան կարգերի էութիւնը, միջոց է տալիս նախադուշակելու հասարակուն գալիք մեծ երեւոյթները:

Ահա այդ վիճակումն էր Գրանսիան, երբ տեղի ունեցան պարլամենտական վերջին ընդհանուր ընտրութիւնները: Այդ ընարութիւնների միջից մի ստետական կուսակցութիւնները դուրս եկան բոլորովին ջարդված: 180—190 պատգամաւորների թւից, որ ունեին նախորդ պարլամենտական ժողովում, նրանք իջան մինչեւ 50—60 հազի: Գոյս միապետական սկզբունքի կատարեալ պարտութիւնն էր գէպի կառավարութիւնը պահոնչող էր տընտեսական և քաղաքական մի քանի, թէեւ ոչ Հիմնական, բայց անհրաժեշտ ըէֆօրմների, բարենորոգումների և ներկայացուցիչ էր մանր բուրժուազական գաստիարգի, — բուլանժիստական տակնապի միջոցին իր միացումը կառավարական հանրապետականների հետ բուլանժիլի գէմ, այնուհետեւ իր արած մի շարք զիշումները կառավարութեանն ու կօմպրոմիսները սրա հետ, նրան զգեցին իր raison d'être-ից, իր գոյութեան իրաւունքից: Մինչեւ մի յայտնի աստիճան նա ներկայացնում էր մինչեւ այդ ժամանակ ժողովրդի մի մեծ մասի քաղաքական ու տնտեսական ձգտումներն ու դժգոհութիւնը, վերոյիշած ընթացքը բոնելուց յետոյ նա այլ եւս չէր կարող այդպիսի ներկայացուցիչ համարվել: Եւ վերջին ընդհանուր ընտրութիւններում ընտրվեցան նրանց ամենաշանառոր ներկայացուցիչներն ու պարսպը լիները, ինչպէս կէմմանսօ և Ֆօկէ, որպէս և Մօժան, Պիչօն, Լակրուա, ևն: Արմատական հանրապետականներ ընտրվեցան թւով 100-ից քիչ աւելի: Կառավարական հանրապետականները, որ հակառակ են առաջարկեմ ըէֆօրմների և պահպանողական են ներկայ դրութեան նկատմամբ, կարողացան իրանցից մօտ 350 պատգամաւոր ընտրել տալ ուրոնց մէջ են 35 հոգի այն միապետականներից որ, ինչպէս վերն ասացինք, իբր հարել էին հանրապետուկան ձեւին: Բայց թէ ինչպիսի Ճնշումներ, սպառնալիքներ, որքան դրամ և ամեն տեսակ անբարոյական միջոցներ գործոց կառավարութիւնն իր կանդիդատուներից, թեկնածուներից կարելիքին չափ մեծ թիւ ընտրել տալու համար մի կող-

ից և միւս կողի սոյի սլիւռ սկզն է անհետ ու ուժիւր ընութիւններին վեսելու — դու յայոնի է քանի այս ուժ սմբազջ հասար սկզնթեան: Այդ բարօք չը կարուց ան խսեգարել սակայն, որ ընտրութիւններում այցի սլիւռ ները տանեն մի ճշմարիտ, անսպաւելի յալթառակ: Ունենալով իրանց ձնոքին մի ճշմարիտ, որոշ սոցի սլիւռակ սն ծրսիր, թէ քաղաքների, թէ արդիւն սրեր սկզն կենտրոնների և թէ գիւղերի կողմի աւելի քան 700,000 ձայնով ընտրվեցան 50—60 սոցիալիստ, որոնց մէջ են այնպիսի հոչակաւոր ագիտ ստորներ ու գիտնակ սն խելքեր, որպէս Ժիւլ Գէդ, Ժօրէս, Էդուարդ Վալիսն, Միլըր ան և այլն, մինչդեռ նախորդ պատրամաւորական ժողովում հազիւ մի քանի սոցիալիստներ կային: Մասնաւ անդ ուշովը բաւու ու նշանաւոր է այն, որ գիւղակ սն ազգաբնակութիւններից ու ներն էլ շատ տեղեր ընտրել են սոցիալիստներին: Արովհետեւ այդ ազգաբնակութիւնը մինչեւ այդ ժամանակ առ հասարակ հարսծ էր մի սպետականներին: Սոցիալիստների այդ փայլուն աշջողութիւնը բերանաբաց թողեց կառապարական հանրապետակ աններին, որպէս և միապետականներին, որոնք ամենը միակերպ ուժով սկսան յարաց ձակիւլ նրանց վրայ և մեղադրել իրերւ ոհարենիք չը ճանաչողներ, գաւառաններ, խոռովարաններ<sup>4</sup>, ամեն տեսակ ենթադրութիւններով պնդելով, թէ պարամետական ժողովում նրանք իրարից բաժան կը լինեն և այդ պատճառով ոչ մի լուրջ գեր չեն կարող խաղալ այնտեղ, կը մն անհշտնակ: Այդ ամենն, անշուշտ, բուրժուազիայի ջերմ փափագն էր, բայց իրականութիւնը շուտով նրանց հիասթափեց: Սոցիալիստների գերը պարամետում ալղէն ինքնըստինքեան որոշված էր թէ սոցիալիստակ սն գողափարի և թէ երկրի դրութեան թելադրութե սմբ: Այդ գերը կայ անում էր նսխ բոլոր սոցիալիստ պատրամաւորների միութեան ու համերաշխ դործունեալթեան մէջ պարամենաւում և սոցիալիստական զանազն Փրակցիաների նոյնօրինակ ընթացքը երկրում: Խրկրորդ, ձգտել գիւղացի ու բանուոր գասմէսքրդի շահերը պաշտպանող օրէնքների և սխոսքներ ներկայացնել պատրամաւորական ժամանատական բարեկաման գիւր սցնելու համար նրա հասարակութեան աշխատութիւնը յօդուած իր շահերի և տաշու նրա ձեռքը կարելին չափ շատ հասարակական զենքեր՝ կռւելու բուրժուազիայի ու կապիտալի դէմ և պատրամատելու բանուոր դսամակ սրդի կատարեալ պատման, սոցիսլական յեղափոխութեան ժումբ: Երրորդ, ազգային ամբիոնից սոցիալիստակ սն պատրամաւորները իրանց ճառուում, խօսելով ընդհանուր ժողովին, մարդկութեան հետ, ներկայացնում են գիտ սկան սոցիալիզմի հիմանըներին ու սկզբունքները: Չորրորդ, օգտվելով իրանց ազգային բարձր գիրքից, նոյն իջուքը տանում են երկրի ամեն կողմերը պաշտպան կանգնելով բանուոր գայ ակարդին դործադուների և այլ հաս սրակական դէպքերի միջացին: Եւ այդ բոլոր միջցներով ու դործունեալթե սմբ ձգտել ամբունակ քաղաքական այլ և այլ հիմարկութիւններին և ապս ժամանակով — որ շատ մօտ է — մեծամասնութիւն կազմելով տիրանալ նաեւ ազգային պարլամենտակ սն ժողովն՝ շարունակ ձգտելով — լինի բոնի, լինի խաղալ միջցներով — բանուոր գասակ սրդի ձեռքը դըշել երկրի քաղաքական զեկը և հաստատել հասարակ սկան սոր, սոցիալիստակ սն, կազմակերպութիւն:

Պատգամաւորական ժողովի նիստերի բացուելուց իւլի այդ ընթացքը բոնցին սօցիալիստ պատգամաւորները: Կրանց խօսած ձառերն իրանց գիտական լայն գաղափարներով՝ գործերի ու իրերի գրութեան իրանց հմտութեամբ, հասարակական ու անտեսական նիւթերի մասին նրանց այդ ճողութեան բովանդակալից ձառերը որոնք մի-մի դասախոսութիւններ էին իրանց առջեւ նստած բուրժուազիայի ներկայացուցիչների համար, և այդ ամենը պարզ բայց եւ վերին աստիճանի ճարտասանական ձեւում ամփոփված, որոշ և երկաթէ տրամաբանութեամբ: ու քըն-նադատութեամբ,— այդ ամբողջը մի բոլորովին նոր կերպարանը տվեց ֆրանսիական պարլամենտին, անընդհատ խորհրդածութիւնների ու գործունեութեան նիւթեր մասակարարելով նրան և պատիւ բերելով ֆրանսիական ազգային ամբիոնին: Իրար ետեւից օրէնքների մի շարք նախագծեր ներկայացրեց սօցիալիստական խորմը պարլամենտում, որոնցից մէկ երկուուր մեծամասնութեան կողմից ակամայ ընդունվելով մնացածների գէմ կառավարութիւնը ներկայացնում էր միշտ իր հակառակութիւնը: Բայց կառավարութիւնը հաստատ մեծամասնութիւն գեռ չէր կարողացել կազմել, երբ յանկարծ պայմենացաւ պատգամաւորների վրայ պարլամենտի ժողովասրահում անշխանական վալիսնի ուումը, որ վիրաւորեց բազմաթիւ անձեր, մեծ մասամբ հանգիստականներից: Այդ ուումըն օգնական հրեշտակ եղաւ կառավարութեան համար, նրան օգնելով ձեռք բերելու բուրժուազիայի պատգամաւորներից կազմված մի հրու, խոնարհ, ստրուկ մեծամասնութիւն, որ սարսափած էր ուումի պայմենից: Եւ այդպիսով այդ մեծամասնութեան ձեռուութեամբ կառավարութիւնը երկիր գցեց բէակցիայի, յետադիմութեան ուղիի վրայ, քուերկել տալով օրէնքներ մամուլի և ընկերութիւնների գէմ, բազմաթիւ ճնշումներ ու կամոյականութիւններ գործադրելով, որոնք դլաւորապէս ուղղված են բանոր գասակարգի և սօցիալիստական կուսակցութեան դէմ, այդ երկուուն էլ սկսած լինելով մեծ ու եղակի գերխաղալ բազաբական ասպարէզում:

Այդ տիտուր ու ծանր հետեւանքներն առաջացրեց անշխանական ուումը Անիշխանականութիւնը մսրդկային հասարակութեան ներկայ դառն վիճակի մի հիւանդուերեւոյթ է: Նրա վերացական, ոչինչ գիտականութիւն չունեցող անկատար թէօրիսները կազմում են ծայսայեցութեան հասցրած բնազանցական (մէտաֆիզիքական) շարունակութիւնը բուրժուազական հայեացքների ու թէօրիսների անհատականութեան (ինդիվիդուալիզմի) վրայ: Անիշխանական թէօրիսներն արդիւնք են ոչ թէ գիտական մտքի քննութեան ու հետազոտութեան, այլ ներկայ թըշուառութիւնների առջեւ զայրացած, գրգռված սրտի զգացումների, որոնք չեն կարող լինել հասարակական լուրջ գործունեութեան: Անիշխանական թէօրիսներն անդադար հակասութիւնների մէջ են ընկնում գիտութեան հետ. օրինակ, հակասում են առհասարակ մարդկային կեանքի պատմական էվոլյուցիայի (ըրջանափոխութեան) և մասնաւորապէս անտեսական էվոլյուցիայի օրէնքներին. բնազանցական դատողութիւններով ստեպ յանդում անտրամարան ու սիւալ եղակացութիւնների ապագայ հասարակական կազմակերպութեան նկատմամբ, և այլն: Եւ այդ թէօրիսների հարազատ պտուղն է պայմուցիկ ուումի անմիտ ու վնասակար գործադրութիւնը Եւրոպայում, ու մի քանի հարուստ բուրժուազ սպանելը՝ ներկայ հա-

սպական կարգերի գոյութեամբ՝ թշուառութիւններին դարձն չէ և ոչ էլ բանւոր դասակարգի գործի ու ձգութիւնների յաղթութեան օգուտ, այլ նաեւ վնաս միայն: Քրանիայում պայմանակ ոն ուումքերը մինչեւ այժմ միայն բանւորներ ու կիներ են սպանել՝ կամ վիշտորել, անմեղ զոհեր կլանել են, ընդհակառակը, կառուպառութեանը տեղի են տվել աւելի զօրանալու, կատաղի ու լիոր բէակցիայի, յետադիմութեան, Ճնշումների ուղին բանալու և բանւոր դասակարգութիւնը ու գրա կուսակցութիւնը գործունեութիւնն ամեն կերպ կաշկանդելու: Անիշխանականներից ոմանք, ինչպէս վերջերս յայտնվեցաւ, դարձել են կղերականութեան ու հարուստների ու գործիբը. այս վերջինները նրանց գործի են տալիս, քաշալերելով նրանց ոճինները, որոնք միանդամայն ծառայում են կղերականութեան ու բուրժուազիայի շահերին, զցելով երկիրը բէակցիայի (յետադիմութեան) մէջ: Անիշխանականների դործունեութիւնն իրանց ուումքութիւնը իրականութեամբ ստիպված խոստովանվում է մի յայտնի նոյն խկ անիշխանական՝ Սիվոկ, — ոչ թէ խելքի, այլ չափազանց գըրգոված զգացումով՝ թելադրուած գործունեութիւն է, որ վերջին հաշով միայն յետածգում՝ է ազատութեան յաղթանակի ժամը բռնութեան վրայ»:

Գրանիստական հանուպետական կոչված կառավարութիւնը Ալիխանին քաղաքական յանցանքով մահւան դատապահութեան իրանութեամբ առաջարկու Արևոտ Ապահովութեան վրայ:

ԱԿԱ-ԵԱՆՑ.

### Վ Ե Բ Զ Ի Ւ Ն Լ Ո Ւ Բ Ի Ւ Բ

#### ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ ԱՇԾԳԵԱՆԻ ՎՐԱՅ.

Ա. Պոլսից մեզ հաղորդում են.—

ԴՄարտ 13, կիրակի առաւոտուն Խորէն պատրիարքը գումագափուի մայր եկեղեցին իջած էր: Եկեղեցին վերջ գացած էր թաղական խորհրդարանը: Երբ ատէկ գուրա կելլէր եկեղեցւոյն բակին մէջ երիտասարդ մը վեց-հարուածեան ուղղելով՝ երեք անգամ փորձեց քաշել, բայց կրակ չառաւ: Անմիջապէս ձերբակալութեցաւ:

ԴՊատրիարքն ուշաթափ կը լուսաւ Արքան Եւ հանրապետութիւնը բաղաբն մէջ էր:

#### Կ Օ Շ Ո Ւ Տ Ի Մ Ա Հ Ը.

Ամսիս 8—20-ին իտալիայի Տուրին քաղաքում վախճանվեց 92 տարեկան հասակում հունդարացի հոչակաւութիւնների լուգվիկ կօշուտ: Հանգուցեալի մասին կը խօսենք: «Հնչակի յաջորդ համարում:

ՀՆՉԱԿԻԵԱՆ ԿՈՒՍԱԿՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՆ

Պամուլի ատէն են եւ լոյս կը տեսնեն առանձին ընդարձակ բրօշերով կեսարիայի և նրա ըրջականների յայտնի գէպքերի, որպէս և գաղափարիայի յայտնի դատավարութեան վերաբերեալ մի շարք վկայաթթեր, ամբաստանցական էվոլյուցիայի օրէնքներին. բնազանցական դատողութիւնների առջեւ զայրացած, գրգռված սրտի զգացումների, որոնք չեն կարող լինել հասարակական լուրջ գործունեութեան: Անիշխանական թէօրիսներն անդադար հակասութիւնների մէջ են ընկնում գիտութեան հետ. օրինակ, հակասում են առհասարակ մարդկային կեանքի պատմական էվոլյուցիայի (ըրջանափոխութեան) և մասնաւորապէս անտեսական էվոլյուցիայի օրէնքներին. բնազանցական դատողութիւններով ստեպ յանդում անտրամարան ու սիւալ եղակացութիւնների ապագայ հասարակական կազմակերպութեան նկատմամբ, և այլն:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ուղարկել հետեւեալ հասցեով:—

Athènes. (Grèce).—M. Beniard. Poste restante.

ԱԹԷԿՆ. Հայկական ազատ տպարան.



